Հավելված
Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի
թեկնածուների ընտրության
մրցութային խորհրդի
2024 թվականի դեկտեմբերի 11-ի
թիվ 1 որոշման

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Սույն աշխատակարգով կարգավորվում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Խորհրդի նպատակն է, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, ընտրել և Հայաստանի Հանրապետության Կառավարությանը ներկայացնել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի մինչև երեք թեկնածու:

3. Խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) սահմանում է սույն աշխատակարգը,

2) ապահովում է մրցույթի անցկացման պայմանների և ժամկետների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը,

3) համադրում է թեկնածուի համապատասխանությունը «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պահանջներին (փաստաթղթերի գնահատման փուլ),

4) հարցազրույցի փուլի անցկացման նպատակով սահմանում է Հարցարանը, թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների, գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում, գնահատման և միավորների հաշվարկման կարգը,

5) փաստաթղթերի գնահատման փուլի արդյունքներով ընտրում է հարցազրույցի փուլ անցած թեկնածուներին,

6) դիմում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով հարցազրույցի փուլ անցած թեկնածուների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու և խորհրդատվական բնույթի եզրակացություն ներկայացնելու նպատակով,

7) հարցազրույցի փուլի արդյունքներով ընտրում է ներկայացվող պահանջներին առավելագույնս համապատասխանող՝ մրցույթում հաղթող ճանաչված առնվազն երկու և առավելագույնը երեք մասնակցի, բացառությամբ այն դեպքերի, երբ մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել մեկ թեկնածու,

8) կազմում և Կառավարություն է ներկայացնում մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը՝ միաժամանակ այն հրապարակելով հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում և վարչապետի աշխատակազմի պաշտոնական կայքէջում:

2. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է դռնբաց նիստերի միջոցով: Նիստերն, անհրաժեշտության դեպքում, կարող են անցկացվել նաև առցանց (հեռավար): Խորհրդի նիստերը տեսաձայնագրվում են:

5. Խորհրդի նիստերի անցկացման օրվա, ժամի ու վայրի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է վարչապետի աշխատակազմի պաշտոնական կայքէջում ոչ ուշ, քան նիստի անցկացումից 48 ժամ առաջ: Նիստի անցկացման օրվա, ժամի ու վայրի մասին վարչապետի աշխատակազմին է հայտնում Խորհրդի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ Խորհրդի քարտուղարը:

6. Խորհրդի նիստերը բաց են քաղաքացիական հասարակության և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար: Վերջիններս Խորհրդի նիստին մասնակցելու համար պետք է ոչ ուշ, քան նիստից 24 ժամ առաջ այդ մասին տեղեկացնեն վարչապետի աշխատակազմ՝ հայտնելով ներկայացուցչի անունը, ազգանունը և հասարակական կազմակերպության կամ լրատվամիջոցի անվանումը, որը ներկայացնում են:

7. Խորհրդի նիստերը հրավիրում և վարում է Խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Խորհրդի քարտուղարը:

8. Խորհրդի յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի հաստատմամբ: Խորհրդի նախագահը կամ, նրա հանձնարարությամբ՝ Խորհրդի քարտուղարը Խորհրդի անդամներին է ներկայացնում օրակարգի նախագիծը նիստից ոչ ուշ, քան 48 ժամ առաջ: Նույն ժամկետում այն նաև հրապարակվում է վարչապետի աշխատակազմի պաշտոնական կայքէջում:

9. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Խորհրդի անդամների առնվազն կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

10. Խորհրդի նախագահն ու քարտուղարը ընտրվում են Խորհրդի կազմից՝ բաց քվեարկությամբ: Խորհրդի անդամի անունը ներառվում է նախագահի և քարտուղարի թեկնածության ցանկում ինքնառաջադրման կամ անդամներից որևէ մեկի կամ մի քանիսի առաջադրման արդյունքում: Ընտրված է համարվում այն թեկնածուն, ով ստացել է Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը: Եթե քվեարկությամբ որևէ թեկնածու չի ստանում Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը, ապա առավելագույն թվով կողմ ձայներ ստացած երկու թեկնածուներն անցնում են երկրորդ փուլ, որի ընթացքում լրացուցիչ քվեարկության արդյունքում ընտրվում է առավել ձայն ստացած անդամը: Եթե ձայների հավասարության պատճառով հնարավոր չէ որոշել առավել ձայներ ստացած անձին, ապա նախապատվությունը տրվում է տարիքով ավագ անդամին:

11. Խորհուրդն իր նիստերը գումարում է Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ անդամների առնվազն մեկ երրորդի առաջարկությամբ:

12. Խորհրդի անդամները նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին Խորհրդի քարտուղարության կամ Խորհրդի քարտուղարի կողմից տեղեկացվում են նիստի անցկացման պահից առնվազն 48 ժամ առաջ:

13. Խորհրդի որոշումների նախագծերն ու այլ փաստաթղթերը կարող են նիստից առաջ քննարկվել գրավոր ընթացակարգով:

3. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

14. Խորհրդի քարտուղարության (այսուհետ՝ քարտուղարություն) գործառույթներն իրականացնում է վարչապետի աշխատակազմը:

15. Քարտուղարությունն ապահովում է Խորհրդի բնականոն գործունեությունը:

16. Քարտուղարությունը՝

1) ապահովում է Խորհրդի նիստերի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին տեղեկատվության հրապարակումը.

2) ապահովում է նիստերի և այլ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ պայմանները.

3) անհրաժեշտության դեպքում ապահովում է քաղաքացիական հասարակության և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների ներկայությունը Խորհրդի նիստերին.

4) ապահովում է Խորհրդի նիստերի տեսաձայնագրումը և կարող է հեռարձակել կամ հրապարակել այդ տեսագրությունները.

5) «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով համարվում է Խորհրդի աշխատանքների մասին տեղեկատվություն տնօրինող.

6) վարում է Խորհրդի աշխատանքների հետ կապված գործավարությունը:

4. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

17. Խորհրդի գործունեությունը դադարեցված է համարվում Կառավարության կողմից հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ նշանակելու պահից: